ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաշվետվություն
2020-2021 ուստարի

ԱԲՀ-ի ուսանողական խորհուրդը, որի կազմում ընդգրկված է 9 ուսանող, հաշվետու ժամանակաշրջանում անցկացրել է 3 նիստ: ՈՒխ-ն իր աշխատանքային պլանի համաձայն հնարավորություն չի ունեցել ծավալել համապատասխան միջոցառումներ՝ կովիդի համավարակով պայմանավորված: Ճիշտ է, դասերը կազմակերպվել են առցանց, հիբրիդային տարբերակներով, չի խաթարվել ուսուցման անընդհատությունը, սակայն Ուսանողական խորհրդի կողմից միջոցառումների կազմակերպումն ու իրականացումն էապես տուժվել է: Այնուամենայնիվ, ՈՒԽ-ն 2020-2021 ուստարվա ընթացքում ապահովվել է ուսանողությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ: Տեղեկատվական-խորհրդատվական աշխատանքներ հաճախ են տարվել: Ուսանողներն իրազեկվել են իրենց իրավունքների ու պարտակա-նությունների մասին, ինչպես նաև ծանոթացել ԱԲՀ-ում գործող, նոր մշակված կամ վերանայված այն փաստաթղթերին, որոնք հատկապես վերաբերել են ուսումնական գործ-ընթացի կազմակերպմանը, ուսումնառության արդյունքների գնահատմանը և այլն:
ՈՒԽ նախագահը մասնակցել է Գիտխորհրդի բոլոր նիստերին:

ՈՒԽ-ի նիստերին մասնակցել են ոչ միայն խորհրդի անդամները, այլև Ստոմատոլո-գիական և Բուժական ֆակուլտետների դեկանը, Ուսումնական մասի վարիչը, Արտաքին կապերի բաժնի մասնագետը, գրադարանավարուհին:

ՈՒԽ-ի նիստերի ժամանակ ուսանողներն իրազեկվել են «**Պրակտիկայի վերանայված կանոնակարգ»-ի, «Պրակտիկայի թղթապանակ»-ի, «ԱԲՀ-ի վերանայված ներքին կարգապահական կանոններ»-ի, «ԱԲՀ սովորողների ակադեմիական շարժունության»**, «**ԱԲՀ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով սովորողների «Ուսանողի ուղեցույցի», Գրադարանի վերանայված կանոնակարգի մասին:**

Հաշվետու ժամանակաշրջանում շատ աշխատանքներ մնացել են անկատար, ինչպես օրինակ ուսանողների մասնակցությունը ներբուհական, միջբուհական սպորտային միջոցառումներին, էքսկուրսիաների կազմակերպումը, այցերը Հայաստանի պատմա-մշակութային վայրեր ոչ միայն հետաձգվել են, այլև չեղարկվել:

ԱԲՀ-ում սովորող ցանկացած ուսանող գիտի, որ Ուսանողական խորհուրդն այն հարթակն է, որտեղ ինքը կարող է բարձրացնել իրեն հուզող հարցերը և ստանալ սպառիչ պատասխաններ, արտահայտել իր սեփական կարծիքն ու դիրքորոշումները: Այս առումով ուսանողության հիմնախնդիրներին առավել մեծ ուշադրություն դարձնելը և այդ խնդիրների լիարժեք լուծում տալը մշտապես եղել է համալսարանի ղեկավարության և ուսանողական խորհրդի անմիջական ուշադրության կենտրոնում է:

ՈւԽ նախագահ՝ Ա.Բաբայան